

ք.Երևան, Արաբկիր վարչական շրջան, Քանաքեռ ՀԷԿ հ.13  
հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիր

«ՄՎ և ԳԱ» ՍՊԸ  
Տնօրեն՝ Ն.Մաֆարյան



«Էկո Մենեջմենթ» ՍՊԸ  
Տնօրեն՝ Ա.Մինասյան

Երևան 2021

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....3

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն.....3

<<ՄՎ և ԳԱ>> ՍՊԸ.....3

1.2 Հապավումներ .....3

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը .....4

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) .....5

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր.....5

1.4.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը .....8

1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....17

1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ .....17

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ.....18

Նախատեսվող գործունեության տարածք շինհրապարակի կազմակերպման հատակագիծ ..20

1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա .....23

1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում .....25

2.ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ .....29

2.1 ՖԻԶԻԿԱՍՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....29

2.2 ԿԼԻՄԱՆ.....30

2.3 Օդային ավազան .....33

2.4 Ջրային ռեսուրսներ .....35

2.5 Հողերի նկարագիրը .....36

2.6 Հողային ռեսուրսներ.....36

2.8 Թափոնների կառավարում .....38

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆԿԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....40

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....40

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....41

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ .....41

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....41

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ .....41

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ .....42

3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ .....43

3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆ .....45

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....47

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ .....49

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....25

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....26

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

- 1.2 Ձեռնարկող՝ <<ՄՎ և ԳԱ>> ՍՊԸ
- 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Քանաքեռ ՀԷԿ հ.13
- 1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ ք. Երևան, Քանաքեռ ՀԷԿ հ.13
- 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան

1.2 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաբնակարան բնակելի համալիրի նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Քանաքեռ ՀԷԿ հ.13 հասցեում:

Բազմաբնակարան բնակելի համալիրի աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բազմաբնակարան բնակելի համալիրի:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաբնակարան բնակելի համալիրի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման

շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

**1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)**

**1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր**

Համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվ պահանջները, ըստ 29 հունվար 2021 ստացած նախագծման թույլտվության N 01/18-07/182-Ա իրականացվել է Երևան, Արաբկիր վարչական շրջան, Քանաքեռ ՀԷԿ հ.13 հողատարածքում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագիծ:

Հողատարածքի մակերեսը 0.5691 հա է, որից կառուցապատման մակերեսը՝ 2232 քմ (կազմում է 39.2%), կանաչապատման մակերեսը՝ 2316 քմ (կազմում է 40.7%), անջրաթափանց մակերես՝ 1143 քմ (կազմում է 20,1%): Նախագծվող բնակելի համալիրը բաղկացած է երկու մասնաշենքից՝ մասնաշենք Ա՝ 13512.6 քմ և մասնաշենք Բ՝ 13323.8 քմ: Մասնաշենքերն ունեն երկու ստորգետնյա, որի կառուցապատման մակերեսը՝ 4295 քմ և 16 վերգետնյա հարկեր: Ստորգետնյա հարկերում՝ -3.300 և -6.600 նիշերի վրա տեղակայված է ավտոկայանատեղի՝ նախատեսված 236 մեքենայի համար, որը կազմում է բնակարանների 70.4%:

Վերգետնյա հարկերի առաջին երկու հարկը նախատեսված են հասարակական՝ Ա մասնաշենքում 1949.5քմ, Բ մասնաշենքում 1861.5 քմ (շենքերում նախատեսված է անհրաժեշտ առանձնացված հորաններ), իսկ 3-16 հարկերը՝ բնակելի: Մասնաշենք Ա-ում նախատեսվում է տեղակայել թվով 167 բնակարան, իսկ մասնաշենք Բ-ում՝ 168 բնակարան:

Մասնաշենք Ա-ում 3-12 բնակելի հարկերը տիպային են, իսկ 13-16 հարկերը արևմտյան կողմից ունեն աստիճանաձև հորինվածք:

Բնակարանները ապահովված են բնական լուսավորությամբ: Բոլոր բնակարանները ունեն լոջիաներ, որոշները՝ տերասներ: Լոջիաներում նախատեսված են օդորակիչների տեղադրման համար նախատեսված խորշեր:

Երկու մասնաշենքերի բոլոր էվակուացիոն ուղիների վրա նախատեսվում է տեղադրել հակահրդեհային դռներ: Աստիճանավանդակները ունեն բնական լուսավորություն և ելք դեպի պատշգամբ: Հրշեջ մեքենաների մոտեցումը շենքին ապահովված է համաձայն բոլոր նորմերի: Թաղամասում նախատեսված է ակտիվ և պասիվ հանգստի գոտիներ, խաղահրապարակներ, զրուցարաններ, ինչպես նաև թաղամասի սպասարկման համար անհրաժեշտ այլ՝ օժանդակ շինություններ: Տանիքների ջրահեռացումը նախագծվել է կազմակերպված ջրահեռացմամբ:

Նախատեսվում է նաև տարածքի ընդհանուր բարեկարգում, կանաչապատ հատվածում խոտածածկույթի իրականացում:

Շահագործման ընթացքում ստորգետնյա ավտոկայանատեղիում ավտոմեքենաներից արտանետված ծխագազերից մարդու առողջության վրա հնարավոր ազդեցության բացառման և օդի որակի բարելավման նպատակով, առաջնորդվելով՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 04 օգոստոսի 2004 թ. N 83-Ն հրամանի պահանջներով ստորգետնյա ավտոկայանատեղիում օդի որակի բարելավման նպատակով նախատեսված է իրականացնել ավտոմատ ծխահեռացման համակարգ:

Տանիքը հարթ է, կազմակերպված ներքին ջրահեռացմամբ:

Նախագիծը մշակված է գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան:

**Հողի ընդհանուր մակերես՝ 5691 ք.մ.**

**Կանաչապատման մակերես՝ 2316 ք.մ.**

**Ընդհանուր կառուցապատման մակերես՝ 3375 ք.մ.**

**Ա մասնաշենքի կառուցապատման մակերես – 1146.5 քմ;**

**Բ Մասնաշենքի կառուցապատման մակերես – 1085.5 քմ;**

**Բնակարանների քանակ 335 հատ;**

**Ստորգետնյա ավտոկայանատեղիների քանակ 236 ավտոկայանատեղ:**

- Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման համար:
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Նախագծվող բազմաբնակարան համալիրի պահանջվող սանիտարա-հիգիենիկ պայմանները ապահովելու համար նախատեսված է իրականացնել բնական արտածում և մեխանիկական դրդամբ օդի ներածում և արտածում:

Ավտոկայանատեղերում նախատեսված է ներածման և արտածման մեխանիկական համակարգեր: Արտածման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգը առանձին է: Օդափոխությունը իրականացված է վնասակար գազարտանետումների նոսրացման և հեռացման համար:

Բնակարաններում օդի արտածումը իրականացվում է սանհանգույցներից և խոհանոցներից իսկ ներածումը իրականացվում է պատուհանների միջոցով: Սանհանգույցներում նախատեսված են առանցքային օդամղիչներ: Խոհանոցներում նախատեսված են օդահեռացման երկու առանձին համակարգեր, մեկը՝ բնական, մյուսը՝ մեխանիկական, որը միանում է գազօջախի վրա տեղակայված քարշիչ պահարանին:

**1.4.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը**

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի սվյալների՝ ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են պալեոգենի ժամանակաշրջանի հրաբխային հոսքերը՝ բազալտները, որոնց ծածկում են ժամանակակից էյուվիալ-դեյուվիալ-պրոյուվիալ նստվածքները:

Շերտ թիվ 1 ասֆալտա-բետոնե ծածկոց խճա-մանրախճային, մասամբ կոպճային կազմի նախապատրաստական շերտի վրա, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0,1-0,2 մետր:

**Տեխնածին առաջացումներ**

Շերտ թիվ 2 լիցքային գրունտ չպառկապնդված, խճա-մանրախճային կազմի, կավային և ավազային նյութի խառնուրդով մինչև 30%, երբեմն շինարարական և կենցաղային թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0,4-0,5 մետր:

**Տեխնածին առաջացումներ**

Շերտ թիվ 3 կարբոնատային կեղև խճա-մանրախճային կազմի, մեծաբեկորներով, հրաբխային ապարներից և քոեճից, կարբոնատացած կավավազա-ավազային լցանյութով մինչև 30%, գրունտը ցեմենտացած է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0,6-0,8 մետր:

**Չորրորդականի հասակի էյուվիա-պրոյուվիալ առաջացումներ**

Շերտ թիվ 4 բազալտ, անդեզիտա-բազալտ մեծաբեկորային, ծակոտկեն, ճեղքա-վորված, վերին մասում մասամբ քայքայված խճի աստիճանի, միջբեկորային կավավազային լցանյութով մինչև 20%, արմատական տեղադրմամբ, գրունտը միջին խտության է, լցանյութը սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0,4-1,6 մետր:

**Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ**

Շերտ թիվ 5 բազալտ, անդեզիտա-բազալտ մոխրագույն երանգով, թույլ ծակոտկեն, թույլ ճեղքավորված, մեծաբեկորային, վերին մասում մասամբ միջբեկորային ավազա-կավային և կավավազային նյութով մինչև 10%, ամուր, ստորին մասում զանգվածա-յին, արմատական տեղադրմամբ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 5,7-12,7 մետր :

**Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ**

Շերտ թիվ 6 խարամ հրաբխային, խճա-մանրաքստային կազմի, խարամացած, շեղջաքարացած. խոռոչային բազալտ, անդեզիտա-բազալտների մեծաբեկորներով, կարմրա-մոխրագույն հրաբխային մոխրա-ավազային լցանյութով մինչև 30%, գրունտը միջին խստության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը՝ համատարած, հզորությունը՝ 3,1-4,0 մետր:




Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ

### 3.3. Հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախըմբերի հետ, պատկանում են միջլավային և լավասակի ջրերի տարատեսակներին, որոնք հորատանցքերով մինչև 28.0 մետր խորությունը, չեն բացահայտվել, ըստ հրատարակված գրականության տվյալների հետազոտվող տեղամասում ստորգետնյա ջրերը տեղադրված են 50.0 մետրից խորը, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ մակերեսային ջրերը ներթափանցելով գրունտային զանգվածների ավելի խորը տեղադրված շերտերի մեջ, կուտակվելով և գետեղվելով հրաբխային առաջացումների պալեոտելիեֆի «փոս ընկած»․ ճկված, խորդ ու բորդ մասերում, կարող են առաջացնել թաքնված ջրափոսեր, ջրակալված և խոնավացած տեղամասեր: Հորատման աշխատանքների ընթացքում մասնավորապես վերոհիշյալ վերնագրերը հանդիպել են թիվ 1 հորատանցքի հորատման աշխատանքների ժամանակ, ընդ որում դրանք ունեցալ են փոքր ծավալներ և տեղադրված են եղել բազալտ, անդեզիտա-բազալտների մակերեսին, ունեցել են ոչ ստաբիլ հոսք և ռեժիմ:


Համաձայն կատարված աշխատանքների տվյալների հետազոտվող տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում գրունտների հետևյալ տարատեսակները՝

- |                                     |                       |
|-------------------------------------|-----------------------|
| – ասֆալտա-բետոնե ծածկոց             | -շերտի թիվ 1          |
| – լիցքային գրունտներ                | -շերտի թիվ 2          |
| – խոշորա-բեկորային գրունտներ        | -շերտեր թիվ թիվ 3 և 6 |
| – կիսաժայռային և ժայռային գրունտներ | -շերտեր թիվ թիվ 4 և 5 |




ԻՐԱԿԻՃԱԿԱԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:2000

1



1:100 200 300 400 500


	ՆՊՁ	Հ. ՍՈՒՐՈՅԱՆ		ՀԱՅՑԻ Բ. ԵՐԵՎԱՆ, ԱՐԴԲԿԻՐ ՎԱՐՈՅԱՆ ԵՐԵՎԱՆ, ԲԱՆԱԾՈՆ ՉԿ 13 ՔԱՐՏԱՐԱԿԱՐԱՆ ԲԱԿԵԻ ՀԱՄԱԻՐ ԿԱՄԱՐԻ	ՏՈՒ	ԹԵՄԻ	ԹԵՄԻՆԻ
	ՃԱՐՏԱՐԱՐԵՑ	Ա. ՓԻՆՈՅԱՆ				Ն	Բ-1
				ԻՐԱԿԻՃԱԿԱԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:2000	ԵՐԵՎԱՆ 2021թ.		



Երևան քաղաք  
Արաբկիր վարչական շրջան  
Հատված կադաստրային քարտեզից  
Կադաստրային ծածկագիր՝ 01-003-0311-0077  
Մասշտաբ 1: 1000



Կադաստրի կոմիտե




	Կորդինատներ	
	X	Y
1	8459182.4871	4453775.2503
2	8459182.3622	4453775.9188
3	8459181.3026	4453782.2307
4	8459182.2829	4453782.4191
5	8459181.4957	4453788.9265
6	8459179.4930	4453806.7641
7	8459188.7624	4453824.4790
8	8459204.8052	4453843.1029
9	8459211.1933	4453845.1820
10	8459216.5494	4453847.0580
11	8459218.1234	4453847.5820
12	8459220.5254	4453848.7410
13	8459241.6407	4453859.5012
14	8459269.7561	4453860.8412
15	8459271.5731	4453852.1041
16	8459276.7682	4453823.6507
17	8459279.1663	4453811.5475
18	8459281.7321	4453800.0840
19	8459227.6175	4453788.3232
20	8459220.2901	4453786.6891
21	8459191.9631	4453780.9320
22	8459186.8740	4453779.8060
23	8459187.2960	4453775.8330

սպասարկման գրասենյակ

Կ.Տ

Երևան քաղաք  
Արաբկիր վարչական շրջան  
Հատված կադաստրային քարտեզից  
Կադաստրային ծածկագիր՝ 01-003-0311-0077  
Մասշտաբ 1: 1000



	Կոորդինատներ	
	X	Y
1	8459182.4871	4453775.2503
2	8459182.3622	4453775.9188
3	8459181.3026	4453782.2307
4	8459182.2829	4453782.4191
5	8459181.4957	4453788.9265
6	8459179.4930	4453806.7641
7	8459188.7624	4453824.4790
8	8459204.8052	4453843.1029
9	8459211.1933	4453845.1820
10	8459216.5494	4453847.0580
11	8459218.1234	4453847.5820
12	8459220.5254	4453848.7410
13	8459241.6407	4453859.5012
14	8459269.7561	4453860.8412
15	8459271.5731	4453852.1041
16	8459276.7682	4453823.6507
17	8459279.1663	4453811.5475
18	8459281.7321	4453800.0840
19	8459227.6175	4453788.3232
20	8459220.2901	4453786.6891
21	8459191.9631	4453780.9320
22	8459186.8740	4453779.8060
23	8459187.2960	4453775.8330

*Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց*

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85\* մաս II, հետև հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 36,0 ամիս կամ 3 օրացուցային տարի շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

ՀՀ Ք. ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ ՀԱՄԱՑՆՔ, ՔԱՆԱՔԵՌ ՀԵԿ 13 ՀԱՍՑԵՌԻՄ ԲԱԶՄԱՐՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

Հ.Հ.	Խումբը	Աշխատանքների անվանումները	Չ. մ.	Մակվել	Հիմնավորումը	Աշխատատար տրոխը		Հեղբուխիսնիտների թիվը	Բանվորների թ.Վը	Տնտեսությունը, ԳԲ	I ՏԱՐԻ			II ՏԱՐԻ							III ՏԱՐԻ																				
						Նորմ, մ-ժամ	Ընդ մարդ-կերբը				ամիսներ																														
											1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31
2		3	4	5	6	7	8	9	10	11	12																														
1	Ա	Նախագատրատական աշխատանքներ					300	1	12	90	12																														
		Տարածքի ժամանակավոր ցանկապատում, ժամանակավոր կոմունիկացիաների տեղադրում, երկրաբաշխական աշահարում, շինարարական մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինարարական, վարչատնտեսական և սանիտարահիգիենիկ առարածների կարգավորում																																							
2	Բ	Հողային աշխատանքներ իրականացում					4900		20	240		20																													
	Գ	Երկաթբետոնե կառուցվածքներ և շարվածք																																							
3		Հիմքերի նախագատրատական շերտի իրականացում	մ <sup>2</sup>	300.0	11-01-002-04	2.5	93.75																																		
4		Հիմքերի իրականացում	մ <sup>2</sup>	1700.0	0-01-001-19	4.86	1032.75							30																											
5		Ջրամեկուսացման աշխատանքներ և ներքին հետիլցք					300.00																																		
6		Երկաթբետոնե պլաների իրականացում /ավտոկայանատեղի/	մ <sup>2</sup>	400.0	06-01-107-3	12.72	636.00	1.5	36	180																															
7		Երկաթբետոնե հեծանների իրականացում /ավտոկայանատեղի/	մ <sup>2</sup>	2013.0	06-01-109-1	16.87	4344.91																																		
8		Երկաթբետոնե պատերի և դիաֆրագմաների իրականացում /ավտոկայանատեղի/	մ <sup>2</sup>	670.0	06-01-108-2	9.91	829.96																																		
9		Երկաթբետոնե ծածկերի իրականացում /ավտոկայանատեղի/	մ <sup>2</sup>	1240.0	06-01-110-1	8.67	1343.9																																		
10		Երկաթբետոնե պլաների իրականացում	մ <sup>2</sup>	1922.8	06-01-107-3	12.72	3057.19	1.5	40	360																															
11		Երկաթբետոնե հեծանների իրականացում	մ <sup>2</sup>	4300.0	06-01-109-1	16.87	9067.63												40																						
12		Երկաթբետոնե ծածկերի իրականացում	մ <sup>2</sup>	5073.0	06-01-110-1	8.67	5497.9																																		
13		Երկաթբետոնե դիաֆրագմաների իրականացում	մ <sup>2</sup>	1830.0	06-01-108-2	9.91	2266.91																																		
14		Երկաթբետոնե ստոյանների իրականացում	մ <sup>2</sup>	200.00	06-01-111-1	24.26	606.50																																		
15		Այլ երկաթբետոնե աշխատանքներ					600.00																																		
16		Շարվածքային աշխատանքներ					10800.0		30	360										40																					
17	Դ	Տանիքային աշխատանքներ					1800.00		20	90																		20													
18	Ե	Բացվածքների լրացում, հատակներ, ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ					21000.0		50	420																															
19	Զ	Ռեմեներական ցանցեր					9000.0		20	450		10																													
20	Է	Բարակարգում և կանաչապատում					5400.0		30	180																															
		<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>					<b>82737</b>			<b>2310</b>																															



### 1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռուցի գործողության գոտում կատարվելիք շինմոնիտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնիտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

### 1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնիտաժային կազմակերպությունների կողմից:

Ավտոճանապարհների, հրապարակների և մայրերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնիտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնիտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

#### 1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան


2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:


3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Նախատեսվող գործունեության տարածք շինհրապարակի կազմակերպման հատակագիծ







#### 1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Բնակելի համալիրի աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 160 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 10 մարդ

Արհեստագործներ, բանվորներ, վարորդներ և օգնականներ -150 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

**Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը**

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա հաշվի առնելով շինարարության հատուկ պայմանները:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Աշտարակային կցովի վերամբարձ կոունկ	QTZ 125	2
2	Ավտոմոբիլային կոունկ	LIEBHERR LTM 1100-4.2	1
3	Ավտոկոունկ	KC 55713-6 ГАЛИЧАНИН	2
4	Էքսկավատոր	CAT 325DL(01), Volvo EC460 BLC(01) Hyundai ROBEX 300	3
5	Գլղոն	CAT CS 563	2
6	Բուլդոզեր	CAT D6R	1
7	Շարժական կոմպրեսոր	Comp air C76	2
8	Բետոնամղիչներ	777 DO 01 Mercedes Benz Axor, 777 TP01 Actros 4141, 001 PS 01 Astra HD	2
9	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	4
10	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	8
11	Փոխակրիչ թրթռիչների համար	ИВ-4	8
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	2
13	Եռաքցման տրանսֆորմատոր	ТД-500	4
14	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		8
15	Փոքր մեքենայացման միջոցներ	Կոմպլեկտ	4
16	Ավտոինքնաթափ	288AU61 Mercedes Benz AXOR 2012, 777AL 01 IVECO TRAKKER AD410T44 2007, 777 AV 01 SCANIA P380 CB 2012	ըստ հաշվարկի
17	Ավտոբետոնախառնիչ	Kamaz 58149z	ըստ հաշվարկի



Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

#### 1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է ամսեկան մեկ մարդու հաշվարկով 70 կգ  $160 \times 70 \times 36 / 1000 = 403$  տ և շինարարական աղբն է 2800 խմ ծավալով, այդ թվում տարածքում առկա արտադրական շինությունների քանդումից առաջացող: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

**Շինարարության ջրի և էներգառեսուրսների պահանջարկը**

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների, կատարման ժամկետների և պետշինի խոշորացված նորմերի հիման վրա:

**Էներգառեսուրսների և ջրի պահանջարկ**

1 էլեկտրաէներգիա Քհաշվ. ԿՎտ 250.0

2 Ջուր խմ/օր 17.45

Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 20լ/վրկ:

Ստորև բերվում են ջրօգտագործման հաշվեկշիռը և անհրաժեշտ էլեկտրական հզորության հաշվարկը:

**ՀԱՇՎԱՐԿ**

*անհրաժեշտ էլեկտրական հզորության ,կՎտ*

1.Աշտարակային կցովի կռունկ QTZ 125/ 2 հատ	120
2. Եռակցման սարքեր /4 հատ	20
3. Տարբեր էլեկտրաուժային սարքավորումներ	40
<i>/հատիչներ, դուրեր,ալոցներ և այլն/ 3 կոմպլեկտ</i>	
7. Էլեկտրաթրոբիչներ	60
8. Շինհրապարակի լուսավորում և կենցաղ	20
9. Շենքերի լուսավորում	20

P տեղ.=280 կՎտ

P հաշվ.= Pտեղ.\* Kպահանջ.=280 կՎտ \* 0,8=224 ԿՎտ կամ մոտավոր 250 կՎտ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Անվանումներ	Տեխնոլոգիական գործընթաց	Միավորների քանակը	Ջրօգտագործման նորմա			Ընդհանուր ջրածախս	Ջրամատակարարման աղբյուրները, մ3/օր			
			Հիմնավորում	Միավորի ծախսը մ3/օր	Ջրի անհրաժեշտ որակը		Քաղ. ջրացանց	արտեզ	Տեխ. ջրատար	Չըջամուկ
2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Տնտեսական/կենցաղային կարիքներ										
Կենցաղային	ԻՏԱ	10	СНиП2/04.85*	0.016	խմելու	0.160	0.160			
Կենցաղային	բանվ.	150	СНиП2/04.85*	0.025	խմելու	3.70	3.70			
Դողերի լվացում	Դողերի լվացում	50	ПКТП Промстрой	0.14		7.00				7.00
Բետոնի պատրաստում	Բետոնիս	5	ЕНиР Н-2-12п.1	0.72		4.00	4.00			
Բետոնի խնամք	ջրում. խմ	80	С401п.163	0.0314		2.51	2.51			
Շինհրապարակի մաքրում	ջրում. քմ	50	ГОСТ 12.3.00 2-75	0.004		0.08	0.08			
Ընդամենը`						17.45	10.45			7.00

Բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեռլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումը կիրականացվի Ղափանցյան փողոցով անցնող D = 600 մմ ջրատարից, կոյուղին կմիացվի Ղափանցյան փողոցով անցնող D = 600 մմ կոյուղատարին, որի համար տեխնիկական պայմանին համապատասխան լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ (տեխնիկական պայմանը կցվում է):

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ

կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում էլեկտրամատակարարումը 635 Կվա պահանջվող ծախսով կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար համաձայն տեխնիկական պայմանի լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ(տեխնիկական պայմանը կցվում է):

Շենքի գազամատակարարումը Q=935խմ ծախսով իրականացվելու է <<Հայռուսգազարդ>> ՓԲԸ ցանցից, Երևան 1 ԳԲԿ-ն սնող կողմնատար գազատարից, որի համար սահմանված կարգով համաձայն տեխնիկական պայմանի լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ունենալ աղմուկի ցածր մակարդակ:

**2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ**

**2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Հետազոտվող տեղամասը գտնվում է Երևան քաղաքի հյուսիսային մասում, Ղափանցյան և Ադոնցի փողոցների խաղերուկից հյուսիս մոտ 320.0 մետր հեռավորության վրա, Երազ բնակելի թաղամասի հյուսիս-արևմտյան կողմում, Չափանցյան փողոցի ձախ կողմում, Քանաքեռ ՀԵԿ հ.13 հողատարածքում և իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք, տարածքում առկա է արտադրական շենք 3330քմ, պահակատուն 36.9քմ, օժանդակ շինություն 23.0 քմ, պարիսպ 189.6 գծմ : Մոտակա բնակելի հասարակական շենք շինությունները գտնվում են 11-75մ հեռավորության վրա :

**Գեոմորֆոլոգիական տեսակետից** Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Քանաքեռ-Արաբկիրի հրաբխային սարավանդի սահմաններում, նրա կենտրոնական մասում, Հրազդան գետի միջին հոսանքի սահմաններում, նրա խորը վեաձև կիրճի ձախափնյա տափարակի սահմաններում, Էռզիոնա-հողմնահարման լանջերի վրա: Մակերեսի նիշերը տատանվում են 1208.0-1212.0 մետրի սահմաններում:

**Յիդրոերկրաբանական տեսակետից** ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Ստորգետնյա ջրերը հորատանցքերով մինչև 28.0 մետր խորությունը չեն բացահայտվել:

**Տեղական երկրաբանական** Կառուցի հիմքերի համար որպես հիմնատակի գրունտներ առաջարկվում են կիսաժայռային և ժայռային գրունտները շերտ թիվ-5: Գրունտների սեյսմիկ կարգերը տրված են համաձայն ՀԵՇՆ II-6.02.2006: Համաձայն նույն նորմի պահանջների հաշվի առնելով նաև երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի առանձնահատկությունները (խարամային գրունտների շերտի զգալի հզորությունը) տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների առավելագույն արագացումների արժեքները և գրունտների ստույգ սեյսմիկ կարգերը որոշելու համար նպատակահարմար է իրականացնել դաշտային գեոֆիզիկական ուսումնասիրություններ: ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները՝ կարստ, սողանք, փլուզում և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել հիմքերի վրա, բացակայում են: Համաձայն ՀՀՇՆ II-6.02.2006 շրջանը և տեղամասը մտնում են III (երրորդ) սեյսմիկ գոտու մեջ:

Մոտեցումներն ապահովված են Ղափանցյան փողոցից: Կից գտնվում են անհատական բնակելի, վարչական և հասարակական շենքեր:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան: Ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, երոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

## 2.2 ԿԼԻՄԱՆ

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան  $-30^{\circ}\text{C}$ , բացարձակ մաքսիմումը հասնում է  $+42^{\circ}\text{C}$ : Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն:

**Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով**

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	1113	-2.9	-0.8	5,1	11.8	16.3	20.8	24,5	24.2	19.9	13,1	6.4	0.1	11,5	-21	41

**Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով**

Օդերևութաբանական կայան	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
														հունվարին	օգոստոսին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

**Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով**

Բնակավայրի անվանումը	Տեղումների												Տարեկան	Չնաձածկույթ		
	Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Առավելագույն տասնօրյակա-յին բարձրությունը,սմ	Տարվա մեջ ձնաձածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի Առավելա-գույն քանակը,մմ
	Ըստ ամիսների															
	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353			
Երևան	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47	50	53	152

Աղյուսակ 1.4 Քամի

Բնակավայր, օդերևույթաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ձնծուս, (ն Պա)	Սափաներ	Կրկնէլիությունը, % ըստ ուղությունների								Միջին արագություն, մ/վ	Միջին ամսական	Միջին տարեկան	Ուժեղ քամիներով	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			Միջին արագություն, մ/վ												20	50	100
			Հյուսիսայն (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրմ)	Հարավ (Ավ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)							
Երևան «Արաբկիր»	889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0,9	2,0	30	20	23	25
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9							
		ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2,1					
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5							
		հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3,4					
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6							
		հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1,8					
			2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0							





### 2.3 Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

Երևան քաղաքում որոշված աղտոտիչների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



## 2.4 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիտորինգի կողմից, որի տվյալները 2014 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

### Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ<sub>5</sub>-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

## 2.5 Հողերի նկարագիրը

### *Հողերը*

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

## 2.6 Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 36000 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 28800 խմ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

2.7 Կենսաբազմազանություն

**Բուսական աշխարհ:** Նախատեսվող գործունեության տարածքը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Երեւանի ֆլորիստիկ շրջանին, որին սովորաբար յուրահատուկ են կիսաանապատային եւ անապատային բուսածածկույթը, տարածքի հարեւանությամբ հանդիպող սակավ բուսատեսակները հիմնականում քսերոֆիտներ (չորասերներ) են: Ընդհանուր առմամբ, Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, քսերոֆիտ, օշինդրային կիսաանապատների բուսածածկ ոչ բնակելի, ոչ արտադրական, բնական բուսածածկով տարածքներում կարող է աչքի ընկնել տեսակային հարուստ բազմազանությամբ: Որպես կանոն, այս տեսակները տարածված են ոչ աղակալված, մակերեսային քարքարոտ գորշ հողերի վրա եւ ներկայացված են օշինդրաէֆեմերային-կիսաանապատային եւ հալոֆիլ-անապատային տիպերով: Օշինդրային կիսաանապատների հիմնական բաղադրիչը օշինդր բուրավետն է (*Artemisia fragrans*), որը մինչեւ 50 սմ բարձրության, փայտացած առանցքով կիսաթփիկ է: Այն զարնանը եւ ամռանը պահպանում է իր մոխրագույն տեսքը, աշնանը ծածկվում է մանր դեղին ծաղիկներով: Գարնանը այդ թփերի միջ եւ ընկած տարածությունը զբաղեցնում են էֆեմերները՝ *Ceratocephalus falcatus*, *Ziziphora tenuiflor*, *Ziziphora persica*, *Alyssium desertorium*, *Poa bulbosa*, *Bromus tectorium*, *Lepidium vesicarium* տեսակներով: Հունիսի կեսերին, տեղումների քանակին նվազեցման եւ օդի ջերմաստիճանի բարձրացման հետ այս տեսակները չորանում են: Սակայն աշնանը տեղումների ավելացման հետ մեկտեղ օշինդրային անապատները վերակենդանանում են, ծաղկում են՝ օշինդրը (*Artemisia*), *Kochia prostata*, *Noaea mucronata* եւ այլ բուսատեսակներ: Ուշ աշնանը եւ ձմռանը հողը ծածկվում է աճող էֆեմերների կանաչ գորգով: Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ *Acorus calamus* L. (Խնկեղեգճահճային), *Lepidium lyratum* L. (Նվարդակքնարածեւ), *Salsola tamamschjanae* Iljin (Օշան Թամամշյանի), *Astragalus paradoxus* Bunge (Գագտար օրինակ), *Glycyrrhiza echinata* L. (Մատուտակ խոզանավոր), *Rhizocephalus orientalis* Boiss. (Արմատագլխիկ արեւելյան): Նշված բուսատեսակները հանդիպում են Երեւանի ֆլորիստիկ շրջանում, սակայն ծրագրի համար նախատեսված տարածքներում տարածման արեւալներ չունեն: Նախնական ուսումնասիրությունների եւ գրականական տվյալների նույնականացման

արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր չեն հայտնաբերվել:

Կենդանական աշխարհ: Նախատեսվող գործունեության հարակից տարածքներին էլ ընդհանուր լանդշաֆտային գոտուն բնորոշ կաթնասունների տեսակային կազմից ամենուրեք հանդիպում են՝ *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), մի քանի տեսակ չղջիկներ՝ *Nyctalus noctula* (շեկիրիկնաչղջիկը), *Vespertilio ognevi* (Օգնեւիմաշկեղը), միջատակերներ (*Hemiechinus auritus*, *Mustela nivalis*): Անողնաշար կենդանատեսակներից տարածաշրջանում հանդիպում են՝ *Phytodrymadusa armeniaca* (ծղրիղներ), *Nocarodes armenus* (մորեխներ), *Amphicoma eichleri*, *Cantharis araxicola* (բզեզներ), *Zodarion petrobium* (սարդեր): Կարիճներից հանդիպում է միայն *Buttus caucasicus*-ը: Նախատեսվող գործունեության իրականացման տարածից դուրս բնական, տնտեսական գործունեության մեջին տեսիվ ներգրավվածություն չունեցող տարածքներում Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներից կաթնասուններից կարող են հանդիպել *Rhinolophus Mehelyi* (Մեհելիիպայտաքիթ), (*Barbastella leucomelas*.) Ասիական լայնականջ չղջիկ, (*Miniopterus schreibersi*) Սովորական երկարաթեւ չղջիկ: Թռչուններից՝ (*Circaetus galicus galicus*) Եվրոպական օձակերը, (*Merops superciliosus persicus*) Պարսկական կանաչ մեղվակերը, (*Sylvia nisoria nisoria*) Եվրոպական ճուռական մանշահրիկը, (*Luscinia svecica occidentalis*), Իրանական կապտափողը, (*Remiz pendulinus menzbieri*) Իրանական սովորական ճոճհավը էլ այլն, սողուններից՝ (*Eumeces schneideri*) Երկարաթեւ սցնիկը, (*Mabuya aurata*) Ոսկեգույն մաքույա, (*Elaphe hohonaekeri*) Անդրկվկասյան սահնօձ:

**2.8 Թափոնների կառավարում**

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 403տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 2800 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, այդ թվում տարածքում առկա արտադրական և օժանդակ շինությունների քանդումից առաջացող, ամբողջությամբ

տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

**3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրոյթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

**3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:



### 3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,
- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

### 3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

#### ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

##### 3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

##### 3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը և անվաղողների լվացումից առաջացող հոսքերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

### 3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 2316 քմ: Տարածքում նախատեսվում է տնկել թխկի 4 հատ, լաբորնում- 2 հատ, իլենի - 12 հատ, սյունաձև թույա - 18 հատ, հուդայածառ - 2 հատ, ասպիրակ - 25 հատ, ֆորգիցիա - 15 հատ:
- Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 560 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման

ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 36 ամիս, նշված հարցը կհստակեցվի մոտ 3 տարի հետո:

### 3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

- բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրադրյունների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
- գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
  - Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
  - Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների
  - Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

### 3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

#### 4. *Մշտադիտարկումների իրականացման պլան*

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,

6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1960000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	400000	400000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	36x35000	1260000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	12x25000	300000
Ամբողջ շինարարության համար		1960000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: (d) Շինհրապարակից ելքի ժամանակ տեխնիկական միջոցների ավադողերը պարտադիր լվանալ
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականության սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	<p>Թափոնների կառավարում</p>	<p>(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p>
<p>Կեղտաջրերի հեռացում</p>	<p>Ջրի որակ</p>	<p>(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեմներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոգուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:,</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ</li> <li>▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության գոնայում:</li> <li>▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:</li> <li>▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար.</li> <li>▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:</li> </ul>



ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում</li> <li>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում</li> <li>- հերթականության ապահովմամբ</li> <li>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Շինհրապարակ</li> <li>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ</li> </ul>	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում</li> <li>- Տեխնիկական միջոցների վառելիքի</li> </ul>	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու

	լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում				
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Մեփական տարածք	Արտաքին գնում	մշտական	Կապալառու



**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

ՔՅ. 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 182-Ա

« 29 » հունվարի 2021 թ.

ՔԱՆԱՔԵՌ ԶԷԿ Հ.13 ՀԱՍՑԵՌԻՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ  
ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «ՄՎ ԵՎ ԳԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորված անձ Ռուսլան Պետրոսյանի դիմումը՝ Քանաքեռ ԶԷԿ հ.13 հասցեում, սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 21.02.2007թ. հ.2158834 վկայականը և տարածքի կառուցապատման էսքիզային նախագիծը:

ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ քննարկվող հողամասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գոտում, որն իր մեջ ներառում է և բնակելի և հասարակական կառուցապատում՝ ընդհանուր օգտագործման տարածքների հավասարաչափ համադրությամբ: Քննարկվող հողամասն ըստ տարածազնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 6-րդ գոտում:

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 64-րդ հոդվածի 10-րդ մասով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 12-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշումը, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 27.08.2020թ. հ.18-06/1040 և 07.12.2020թ. հ.18-06/1463 եզրակացությունները:

1.ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Քանաքեռ ԶԷԿ հ.13 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը /կատեգորիան/ սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ բնակելի կառուցապատման:

2. Հողամասի նկատմամբ փոխված նպատակային և գործառնական նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում՝ համաձայն կից ներկայացված նախագծման թույլտվության /ճարտարապետահատակագծային առաջադրանքի/:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման հիման վրա հողամասի նպատակային նշանակության փոփոխման իրավունքի պետական գրանցումը ենթակա է իրականացման այդ պահին հողամասի կադաստրային արժեքի գումարը սեփականատիրոջ կողմից վճարված լինելու դեպքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

5. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ



Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 09/18 - 029-132-Ա 29 « 01 » 2021թ.

**Օբյեկտ** *Քաղաքնակարան բնակելի համալիր (բարձր ռիսկայնության օբյեկտ, IV կարգորդիա)*

*Մեկ փուլով՝ «Աշխարհաբնային նախագիծ» կամ «Երկու փուլով՝ «Նախագիծ» և «Աշխարհաբնային փաստաթղթեր»* նախագծային փաստաթղթերի մշակման համար

**Գտնվելու վայրը** *Արարկիր վարչական շրջան, Քանաքեռ Հե՛կ հ.13*

**Կառուցապատող** *«ԱՎ ԵՎ ԳԱ» ՍՊ ընկերություն (պետական ռեզիդենտի գրանցման հ.264.110.04350 վկայական)*

**Առաջադրանքի տրամադրման հիմքը** *Կառուցապատողի հայրը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 21.02.2007թ. հ.2158834 վկայականը, կառուցապատողի կողմից թ. հ. իրազեկման շրջանակում ներկայացված գրությունը, էքսիզային նախագիծը:*

**Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Մ Ա Ս Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ը**  
*(հաստատվելով (\*) նշված դրույթների գրառված արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ փեմեայով՝ (Մ 1.500)*

*Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ N 1920-Ն որոշման 24-րդ կետի համաձայն՝ հողամասի գործառնական նշանակությունը փոփոխվում է բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, կադաստրային ծածկագիրը՝ 01-003-0311-0077:*

**1. Հողամասը գտնվում է**

**2. (\*) Հողամասի չափերը** *(հողամասի դիրքը բաղադրատեսակ միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)*  
0.5691 հա:

**3. Հողամասի առկա վիճակը** *(հողամասի սահմանները կրողի նպատակային նշանակությամբ, մակերեսը (հա))*  
Արարկիրական շրջանում գտնվող ծանրարժեքի հողամաս:

**4. (\*) Տրանսպորտային պայմանները** *(նախապահված ավտոմեքենաների, երկաթուղային տրանսպորտի մուտքումները և այլն)*  
Նախաճացյան փողոց:

**5. (\*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ** *(ցամաքային կառուցումներ, կոլեկտոր, գազային մատակարարման, սառչ ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրական հաղորդակցության համակարգեր)*  
Կից գործող ինժեներական ցանցեր և հաղորդակցություններ:

**6. (\*) Կից հողամասեր** *(նախազգիտող հողամասով կամ կից տարածքով անցող ինժեներական ներակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)*  
Նախաճացյան փողոց, բնակելի և հասարակական շենք շինություններ:

**7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)** -----

**8. (\*) Հատակագծային սահմանափակումներ** *(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող սրբությունների, ինժեներատրանսպորտային ներակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)*

**Ն Ա Մ Ա Գ Ծ Մ Յ Ի Ն Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը**  
*(ստորագրվելով (\*) նշված դրույթների գրառված արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ փեմեայով՝ (Մ 1.500)*

**9. Ճարտարապետահատակագծային պահանջներ** *(նշելով ՀՀ տնտեսության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջները, առկա բոլոր շինական ծրագրային փաստաթղթերի դրույթները կամ դրանք բացակայության դեպքում՝ կազմակերպված (կազմակերպվող) շտաբաշինական միջավայրի պայմաններին, ստանդարտներին, ստանդարտներին, ստանդարտներին, ստանդարտներին, ստանդարտներին և գոնաճյան (ռեժիմների) վերաբերյալ)*  
Մշակել քաղաքնակարան բնակելի համալիրի նախագիծ 21.02.2007թ. հ.2158834 վկայականով ամրագրված հողամասի սահմաններում:

**9.1. (\*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)** -----

**9.2. (\*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)** *Հարակից բնակելի շենքերից, հողամասերից և միմյանցից կառույցների հեռավորությունը նախադրանքի գործող նորմատիվային պահանջների համաձայն:*

**9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)** *Համալիրը նախագիծը միասնական 2-ից 3 ստորգետնյա և մինչև 12-ից 16 վերնգետնյա հարկերով, դեպի հյուսիս և արևմուտք շենքը նախագիծը արտիճանաձև /նախանջ/ հորինվածքով, բնակելի հարկերի բարձրությունը՝ հարկից հարկ ընդունելով մինչև 3.30մ.: Հարավոր է մասնակի ավելի բարձր ծավալների շեշտարդյուն՝ տեխնիկական սենքերի, փանիքը սպասարկող սարժենականակներ և վերելակների հորանների համար:*

**9.4. կառուցապատման խտության գործակիցը** *(կառույցի (կառույցների) վերջնական մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)* -----

**9.5. կառուցապատման տոկոսը** *(կառուցապատվող (անջնաձևի) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)*  
Վերգետնյա ծավալը մինչև 40%  
Սպասարկող ճանապարհների ու սարվածքների համար մինչև 20%

**9.6. կանաչապատման տոկոսը** *(կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)*  
Արորգետնյա ծավալը մինչև 80%

**9.7. այլ պահանջներ** *(կառուցապատման և կառուցվածքային պահանջները)*  
40% և ավելի

- Մյուս թույլվողության 20-րդ կետով ամրագրված պահանջները ապահովելու նպատակով՝ շինարարական իրապետական կազմակերպման նախագծում, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման պարագայում նշել դրանց մակերեսը:
- Նախագծով ապահովել հարակից տարածքների շահագործման այդ թվում՝ արևադարձային ռեժիմի ազդեցության և նորմատիվային պահանջները:
- Հարակից գոտիների լուծումները մշակել համաձայն պարզաբացի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները:
- Կառույցներում կենտրոնացված օդափոխության համակարգ չնախագիծելու դեպքում, կառույցի արտաքին տեսքը և ճարտարապետական հորինվածքը հեղափոխություններից զերծ պահելու համար, նախագիծը քողարկված համակարգ փոխարինելու պահանջներով:
- Հարևան հողամասեր դիտարկելու կողմնակալներում լուսային բացվածքներ նախագիծելու պարագայում ապահովել նորմատիվային պահանջները:
- Թողամասում նախագիծել ավելի և պայմի հանգրվան գոտիներ՝ խաղաղարարական, գրողարարներ, ինչպես նաև թաղամասի սպասարկման համար անհրաժեշտ այլ օժանդակ շինություններ:
- Կառույցում նախագիծել հասարակական նշանակության տարածքների սպասարկման համար անհրաժեշտ առանձնացված ինժեներական հորաններ, բացառելով հեղափոխում արտաքին ճակատներով օդափոխության անվտանգություն:
- Նախագծով լուծել ավտոտրանսպորտի անվտանգ ելումուտի և բացօթյա ավտոկայանման խնդիրները:
- Տեխնիկական նախագիծը կազմակերպված ջրահեռացմամբ:



10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը	Քանդման ենթակա 21.02.2007թ. հ.2158834 վկայականով ամրագրված շինությունները:
11. Ստորգետնյա, կիսանկողի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները	Ստորգետնյա հարկերում՝ ապահովել բնակարանների թվաքանակի առնվազն 70%-80%-ին համապատասխան ավերակայնաբեղեր:
12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Նախագծի ինժեներական մասը մշակել իրավասու կազմակերպությունների կողմից փրված տեխնիկական պայմաններին համաձայն:
12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում	Կցվում է (ժամանայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2. (*) էլեկտրամատակարարում	Կցվում է (ժամանայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	Կցվում է (ժամանայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատա կոյուղու (ներառյալ դիսախորը) տեղադիրըը	----- (ժամանակ N 1 հավելածուի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նշված առաջին տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	-----
12.6. աղբահանություն	-----
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	Կազմակերպել ջրահեռացում: (տեխնիկական նախագիծ, քանիտեստ, ինժեներական պաշտպանության միջոցառումներ)
14. Բարեկարգում	Մշակել տարածքի բարեկարգման, կանաչապատման և ուղղածից հարակազմման նախագիծ, հնարավոր է նախադրել ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գոլաբույս և այլն: (տեխնիկական պայմանագրման վերաբերյալ պահանջները, կանաչապատման, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գոլաբույս և այլն)
15. Շինարարական նյութեր	• երկաթբետոն, սրբաքար և կոպրպարաշ թար, փայտ, մեծաղ, ապակի, բարձրորակ սպիտակ, երեսապատման բարձրորակ նյութեր: (շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները տեխնիկական նախագծի լուծումների, արտադրողի, պատրաստման վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	----- (արտակարգ իրավիճակներում մարտնչող, օդելիների պաշտպանության միջոցառումներ)
17. Հակահրդեհային պահանջներ	Ապահովել հակահրդեհային նորմարիվ պահանջները, ապահովել հրդեհ հիդրանտների առկայությունը: (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումներ)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	Նախադրել հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններ՝ ՀՀԸՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմին համապատասխան: • Նախադրել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ: • Ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, ինչպես նաև աղմուկին, թրթռումներին, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական և փոխնորմին ծագման գործոնների սահմանափակման կանոններով և նորմերով, շինարարական նորմերով երկրաչափոր նորմարիվ պահանջները: (շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումներ)
19. Շրջակա միջավայրի պահպանում	• Նախադրել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ: • Ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, ինչպես նաև աղմուկին, թրթռումներին, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական և փոխնորմին ծագման գործոնների սահմանափակման կանոններով և նորմերով, շինարարական նորմերով երկրաչափոր նորմարիվ պահանջները: (շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումներ)
20. Շինարարության կազմակերպում	Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկարի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ. 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ժԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ երևան քաղաքի ակադեմի 16.03.2012թ. հ. 405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները: 111. Երբ կատարվում շենքերի, շինությունների համար շինարարության թույլատրված տրվում է 2 աստիճանով, երբ տվյալ օբյեկտի շինարարության համար ցարքաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի ԱՆ-Պ 1.04.03.85* (Շինակոնստրուկցիայի շենքերի և կառուցվածքների շինարարության տնտեսության նորմեր) գերատեսչական արտոյ սահմանված նորմերով այլ ժամկետներ նախատեսված չեն: 112. Տնտեսական ունեցող շենքեր և շինությունների (երևանապետական (ներառյալ՝ քաղաքային), վերականգնման, բարեկարգման և բարեկարգման աշխատանքների համար թույլտրվող տրվում է նախագծային փաստաթղթերով տվյալ օբյեկտի շինարարության կառուցման կամ ապահովման) տնտեսության նորմերով հաշվարկված ժամկետով: (առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցությունից բացառման, ցարքաշին տնտեսության և տրանսպորտի անվտանգ աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջարկների գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	Երկու փուլ, Հնարավոր է մասնաշենքերի առանձնաված փուլային համաձայնեցում: (Եթե մեկ առաջարկների գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)
<b>Լ Ի Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Զ Պ Ա Յ Մ Ա Ն Ե Ր Ը</b>	
22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2-ի համաձայն՝ պետական համալիր փորձաքննություն ինչպես նաև ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ: (ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծի երաշխավորագիրը՝ երբևէ կատարելով համապատասխան իրավական ակտեր)
23. Միջանկյալ համաձայնեցում	ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ: (Եթե մեկ առաջարկների գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)
24. Հասարակական քննարկումներ	----- (Հասարակական հարապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)
25. Համաձայնեցումներ	• Երևանի քաղաքապետի հետ: • Մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեխնիկական պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել փուլային ենթակառուցվածքի սեփականատերից (օգտագործողի) հետ: (Եթե մեկ առաջարկների համաձայնեցումները օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ որպեսզի սահմանված պահանջները և այլ թույլատրված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերից (օգտագործողի) հետ)
26. Փոստային բաժանորդային պահպանումներ	Բնակարանների սպասարկման համար առաջին հարկում նախադրել բաժանորդային տեղադրում և համար համապատասխան տարածքներ:
27. Այլ պայմաններ	Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առկա քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու մասին» հ. 128-Ն հրամանով հաստատված դրույթներին:

*(Handwritten signature)*



*(Handwritten signature)*

Երևանի քաղաքապետ՝  
**Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կապարող՝ Է. Օրդուխանյան

ԿԿԱՅԱԿԱՆԸ ՏՐԿԱԾ Է ԱՆՇԵՐԱԿԱՆ ԵՆՈՐՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՐՈՎ  
(սեփականության կամ օգտագործման)

և Աշխ և ԳՆԻ ՅՑ ԱԳՃ-ԻՆ  
(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))

Գ. Շրեան, Շիրազի կամուրջ, Փանեասի 435 թիվ 13  
(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)


Ենթաթիվ 30.03.99թ. թիվ 5-1428 արտաբանման թ 09.11.99թ.  
(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

Օժանդ. Կ-ԻԻ և արտաբ. պայմ-քերի, Շրեանի ֆուրսեր- ԳԻՄԱՆ ՎՐԱ  
պեղի 11.10.06թ թիվ 1613-Ա պրոժեկտ

**ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՐԲ  
ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ  
ՕԻ-ՈՈՅ-3-1 ՄԱՏՅԱՆԻ 000086 ՀԱՍԱՐԻ ՏԱԿ:**

**ՍՈՒՅՆ ԿԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ. ՄԵԿԸ ՏՐԿՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ  
(ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՄԸ ՊԱՅՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ:**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ**



ՂԵԿԱՎԱՐ Յ. Բաբայան  
(ստորագրություն)

« 21 » փետրվար 2007թ.

2158834

**ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 01-003-344-077  
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆԵՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ Բնակավայրերի  
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ արքայաբանի շինարարությունների համար  
 ՀՈՂԱՄԱՍԻ ԶԱԹԸ (հա) 0,5691  
 ԻՐԱՎՈՒՆԹԻ ՏԵՍԱԿԸ անխախտություն

**ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 01-003-344-077-001  
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆԵՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ արքայաբանի  
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ գաբիտ  
 ՄԱԿԵՐԵՍԸ (քառ.մ.) 3330,0  
 ԻՐԱՎՈՒՆԹԻ ՏԵՍԱԿԸ անխախտություն

**ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

Գ/Գ	ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՄԱԿԵՐԵՍԸ (քառ.մ.)	ԻՐԱՎՈՒՆԹԻ ՏԵՍԱԿԸ
		արքայաբանի	36,9	անխախտ
		Օճանի, շինարար	23,0	անխախտ
		պարիսպ	189,695	անխախտ

Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ պայմանում՝ զուտ հեղափոխության օգտին Գործարարների և շինարարների միությունների կողմից կատարված փոփոխումները կհամապատասխանեն պայմանագրի պահանջներին և չեն ազդում հողի արժեքի վրա:

Կատարողներ Ս. Մանուկյան  
 (ստորագրություններ)  
Վ. Մանուկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՎԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA

ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

<< ք. Երևան, Ա Արմենակյան փող 127

N ՏՊ-ՃՀԱ-0.4/0199

<<11>> 05 2020թ.

ԷԼԵԿՏՐՈՎԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՃՀԱ տրամադրելու համար

Համաձայն ԷՄՕԿ-ի 13.9 կետի պահանջների

Տրվում է՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝

Ա. Սեդոյանին (08.05.2020թ., 50/2-38997)

Սպառիչի գործունեությունը և հասցեն՝ ք. Երևան, Արաբկիր, Քանաքեռ ՀԷԿ հ.13

Պահանջվող հզորությունը՝ 635 կՎԱ

Սնող ցանցի լարումը՝ 0.4 կՎ

1. Բազմաբնակարան բնակելի շենքի Էլ. մատակարարումը հնարավոր կլինի իրականացնել՝ կառուցվելիք ենթակայանի 0.4 կՎ վահանից:  
Նոր ենթակայանի էլ.սնումը կարելի է իրականացնել՝ ՏԵ0520-ի 6 կՎ ԲԱ-ից:
2. Էլեկտրամատակարարման իրականացման համար, կառուցապատողը պետք է դիմի «ՀԷՑ» ՓԲԸ ցանկացած սպասարկման կենտրոն (մասնավորապես՝ ք. Երևան, Արմենակյան 127)՝ ներկայացնելով ԷՄՕԿ-ի 13.2 կետի պահանջներով նախատեսված փաստաթղթերը՝ էլ. ցանցին միացման պատվեր ձևակերպելու համար:
3. Բազմաբնակարան բնակելի շենքի էլեկտրամատակարարման նպատակով՝ անհրաժեշտ է որպեսզի կառուցապատողի կողմից տրամադրվի  $6 \times 12 = 72 \text{մ}^2$  հողատարածք՝ նոր ենթակայանի կառուցման համար:

Տեխնիկական տնօրեն

կատարող Դ. Սահակյան  
Հեռ. 59-12-65

Դ. Գրիգորյան



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Պատկերված Արմենիա» ՓԲԸ  
 Վերականգնող տնօրենի տեղակալ-  
 Գլխավոր ճարտարագետ՝

Ա. Հակոբյան

«27» մայիսի 2020թ.

**Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

ՀՀ Երևան քաղաքի Արարկի վարչական շրջանի, Քանաքեռ ՀԼԿ թիվ 13 հասցեում նախատեսվող (կառուցվող) բազմաբնակարան բնակելի շենքի

*(օբյեկտի անվանումը և հասցեն)*

գազամատակարարումը,  $P=0.3$  ՄՊա ճնշման և  $Q=935$  խմ/ժամ նախատեսվող ծախսով իրականացնել Երևան-1 ԳԲԿ-ն սնող  $D_{պ}=700$  կողմնատար-գազատարի 5.9 կմ-ից,

*(գոյություն ունեցող գազատարի կամ ԳԲԿ-ի անվանումը)*


որի տեխնիկական պայմաններն են՝

1. Միացման տեղում գազի աշխատանքային ճնշումը	$P_{աշխ փաստ.} = 1.1 \div 2.5$ ՄՊա
2. Գազատարի տրամագիծը $\varnothing$ (մմ)	720 մմ
3. Գազատարի որևէ հատվածի վերականգնման (վերատեղադրման) անհրաժեշտություն	չկա
4. Միացման տեղը	Ըստ նախագծի – Երևան-1 ԳԲԿ-ն սնող $D_{պ}=700$ կողմնատար-գազատարի 5.9 կմ
5. Օբյեկտի հեռավորությունը գազատարից	Ըստ նախագծային լուծումների և գործող նորմատիվների պահանջների:
6. Տեղադրվող գազի հաշվիչը	Ըստ գազապառման ծախսերի - բարձր ճշտության դասի՝ կահավորված էլեկտրոնային ճշտիչով:
7. Պայմաններ	<p>7.1 <u>Կառուցել՝</u></p> <p>7.1.1 Գործարանային արտադրության, համապատասխան հզորության գազաբաշխիչ կայան (ԳԲԿ), որի կազմում պետք է մտնեն՝</p> <p>ա) փոխմիացման (переключения), գազի մաքրման, գազի ճնշման նվազեցման, գազի հաշվառման, գազի հոտավորման և սեփական կարիքների համար գազի վերցնման (отбор) հանգույցները;</p> <p>բ) էլեկտրասնուցման, կապի, կոռոզիայից պաշտպանման, պահպանման և հրդեհային ծայնա-ազդանշանային, ջրամատակարարման ու կոյուղու համակարգերը;</p> <p>7.1.2 ԳԲԿ-ն սնող կողմնատար-գազատար (<math>P_{նախ.}=4.0</math> ՄՊա), փականային հանգույցներում օգտագործելով ստորգետնյա գնդային փականներ:</p> <p>7.1.3 Միջին և ցածր ճնշման գազատարներ, նախատեսվող (կառուցվող) բազմաբնակարան բնակելի շենքի գազաֆիկացման համար:</p> <p>7.2 Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակել ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 01.15.2009թ. № 119-Ն, 08.11.2007թ. № 1438-Ն, 16.07.2015թ. № 787-Ն որոշումների պահանջներին համապատասխան և համաձայնեցնել բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:</p>


<p>8. Լրացուցիչ պայմաններ</p>	<p>8.1 Կառուցապատման ոլորտում իրավասու մարմնի լիազորություններով պայմանավորված ճարտարապետահատակագծային առաջադրանքը ձևավորել տեղադիրքային առումով նույն ուղղությամբ տեղաբաշխված կառուցապատողների կողմից նախատեսվող գազաֆիկացման աշխատանքների համակարգմամբ, որի դեպքում քաղաքաշինական և տեխնիկական պահանջների ընդհանուր լուծմամբ կապահովվի գազաբաշխիչ կայանի ընտրությունը և մեկ ուղեգծով գազատարի կառուցումը համաֆինանսավորման սկզբունքով՝ սպառման ծավալների գումարային մեծությանը համապատասխան մեկ ընդհանուր տեխնիկական պայմանների հիման վրա:</p>
-------------------------------	--

Հիմք՝ - «Տրանսգազ» ՍՊԸ-ի 25. 05. 2020 թ. № 01/13.5/654-2020 գրությունը  
 - Տեխնիկական պայմանները 25.05.2020թ. №21:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ  
 ԳՏՑ Շ և Ս բաժնի պետ




---



Վ. Ասրիյան

Կազմեց՝

Վ. Գրիգորյան



Ջուր

« 14 » *Տեղադրված* 2020թ.  
N *1001/2020*

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի  
քաղաքաշինական գործունեության հատուկ  
կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժ/պ  
Ա. Սեդոյանին

Ատարկան՝ Տեխնիկական պայմանի ելակետային տվյալներ

Հարգելի պարոն Սեդոյան,

Ի պատասխան Ձեր 08.05.2020թ. Թիվ 50/2-38997գրության՝ հայտնում եմ, որ Արարիկի քարտեզային շրջան, Քանաքեռ Հէկ հ.13 հասցեի ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել Ղափանցյան փողոցով անցնող d=600մմ ջրագծից, կոյուղին հնարավոր է միացնել Ղափանցյան փողոցով անցնող d=600մմ կոյուղատարին, իսկ հեղեղատարը հնարավոր է միացնել Ղափանցյան փողոցով անցնող d=1000մմ հեղեղատարին:

Գրությամբ ներկայացված հաշվարկները անհրատեսական են, ուստի միացումների տրամագծերը կարող ենք տրամադրել համապատասխան լիցենզավորված կազմակերպության կողմից ներկայացրած ջրապահանջի հաշվարկ ներկայացնելուց հետո:

Տեղեկացնեմ նաև, որ վերոնշյալ աշխատանքները պետք է իրականացվեն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի և համաձայնեցված նախագծի համաձայն:

Հարգանքով՝

*Սեդոյան*

Գլխավոր տնօրեն  
Ա.Շահինյան

Չատասխանատու  
USF պետ Ա.Մարտիրոսյան

*Մարտիրոսյան*

ՎԵՐՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ  
ԵԼԻՑ 14 05 2020

ՀՀ, ք. Երևան, 375025, Արովյան 66ա  
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185  
Էլ. փոստ՝ office@vjur.am  
Վեբ-էջ՝ www.veolia.am

RA, Yerevan, 375025, St.Abovyan 66a  
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-185  
E-mail: office@vjur.am  
Web site: www.veolia.am